

2. ՄԱԿԱՐ ԵՊԻՍ. ԲԱՐԻՈՒՏԵՐԵԱՆՑ.

Փետրուարի 6-ին, էջմիածնում վախճանուեց Մակար եպս. — Բարխուտարեանցը, Հանգուցեալը Արցախի Խնածախ գիւղացի էր, նա իւր ուսումն աւել էր Շուշում և երէտասարդ հասակում գնացել էր Երուսաղէմ, ուր աշակերտելով հանգ. Մելքիսեդեկ արքեպիս. Մուրատեանցին՝ ձեռնադրուեցաւ վարդապետ, որից յետոյ վերադառնալով հայրենիք երկար ժամանակ քարոզչի պաշտօնով շրջում էր հայրենի գիւղերում։ Նա միաժամանակ պարապում էր և գրականութեամբ։ զբաժ ունի մի շարք կրօնական և պատմական երկեր, վերջիններս որպէս արդիւնք իւր բազմամեայ ուղևորութեան Արմինքում, Արցախում և առհասարակ Աղուանից աշխարհում։ Սոցանից գլխաւորներն են «Աղուանից երկիր և դրացիք», «պատմութիւն Աղուանից» երկու հատոր, որի երկրորդ հատորը դեռ մամուլի տակ, է, «Գաղտնիք Ղարաբաղի» և այլն։ Ունի և մի քանի գրուածներ Ղարաբաղի բարբառով, օր. «Արագը տարին կտարի» և այլն։

Մակար եպիսկոպոսը վարեց և եկեղեցական բազմաթիւ պաշտօններ, ինչպէս սինօդի անդամութեան, առաջնորդութեան և այլն։

ՀԱՅ

ԻՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

Շուշի. Ա. Գեանջեցեան.—Ձեր ընոր կեանքի շէմքին՝ դրաման ստացանք։ Ձեզ նամակ կգրենք այդ մասին։

Կարս. Բ. Թորոյեան.—Կարլ Կառլսկու «Ճրիդրիս Էնգէլսի յիշատակին» երկի թարգմանութիւնը ստացանք։

Փարիզ. Հայ Աշխատ. միութեան վարչութեան.—Ձեր կոչը տպում ենք, իսկ ձրի «Լուսայս» անկարող ենք ուղարկել և վերջապէս որ մէկին ուղարկենք ձրի. ամեն մի վճարող բաժանորդին մի օրինակի էլ ձրի պատուէր ենք ստանում. այդ մասին կարող է միայն հասարակութիւնը մտածել և ոչ մի խմբագրութիւն, որ ամենայն տնտեսութեամբ հաղիւ կարողանում է ծայրը ծայրին հասցնել։

Թիֆլիս. Աբիս. Յովհ.—Ստացանք Արտուր Լէյստի ընդհանուր պալանի՞ն՝ պատմութեան թարգմանութիւնը։